ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԽԱՊԱ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Վեդի «_01_» նոյեմբերի 2018 թ.
Ժամը՝ **11** ^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Վ. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ	Ռ. Եղիազարյան
	Ա. Բաղդասարյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա.Վարդանյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի հոկտեմբերի 26-ին, կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե: Պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկատվությունը չի տրամադրվել: Կարգի 44-րդ կետի համաձայն մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի հոկտեմբերի 26-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի հոկտեմբերի 31-ին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

3. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

3.1 Հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա «ԽԱՊԱ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ին

3.2 Հանձնաժողովի քարտուղարին.

Պայմանագրի կնքման նպատակով «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Հանձնաժողովի նախագահ Վ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ Ռ. Եղիազարյան

Ա. Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար Ա.Վարդանյան